կան–փիլիսոփայական վարդապետութիւնից. նա ինքնին ինքնաբաւ ու հոպիտ մի այլանդակութիւն է. նա չի կուում Արեւմուտքի քաղաքակրթութեան դէմ, այլ ազդերի դէմ. եւ ընդհակառակը ցուցադրում է չափազանցացրած յափշտակութիւն դէպի այն բոլորը՝ ինչ ստեղծագործել է եւրոպական միտքը, թէեւ այդ բոլորից նա կերտում է խարդախ ու չողչողուն պարոտիաներ թէ՛ իր ժողովուրդը եւ թէ՛ աշխարհը խաբելու համար:

Քեմալիզմը համայնավարութեան ամենառեակցիոն թշնամին է. նրա ղեկավարն ու առաջնորդը կլանի հոգեբանութիւնն է. իր մեթոդները ծագում են նախնական մարդու ատաւիկ, անասնական բնազդներից: Արդարեւ Քեմալիզմը յանկարծ ինքնիրեն, իր կամքին ձրգուած նախնական կատաղութիւնն է, որ պոռթկում է սանձարձակ ու աւերիչ. եւ որչափ մեծ է աւերը, այնքան հզօր է իր երջանկութեան քրքիջը, այնքան կրքոտ խաժամուժի օրգիան:

«Գազաններ են նստած Անգորայում, ասում էր ինձ 1922 թուին Լօզանում մի վաղածանօթ թիւրք հասարակական գործիչ. գազաններ այս բառի ամենայստակ իմաստով, առանց փոխաբերութեան. պարզապէս մարդակերներ»:

Ցիշեցի թիւրք ծանօթիս խօսքերն Անգորայի ու Զմիւռնիայի կախաղանների օրերին:

Բոլշեւիզմը պատասխանատուութեան ըզգացմունք ու երկիւղ չունի, եւ անխնայօրէն փշրում է այն բոլորը, ինչ իր տեսակէտով կարող է իր յառաջընթացութիւնը խափանել:

Քեմալիզմը միլիոնաւոր անմեղների արեան պատասխանատուութեան մղձաւանջից ազատուած՝ ցատկրտում է խելայեղ ցնծումով եւ այն համոզումն ունի, որ իր համար ոչինչ կայ անկարելի աշխարհում:

Քեմալիզմը մեր օրերի ներոնիզմն է, որ ոճիրներից ու արիւնից յղփացած, անձնատուր է արուեստի բարձր հաճոյքին, եւ ուզում է աշխարհը զարմացնել իր երաժշտական հանճարով:

Իբրեւ արիւնարբու ու ջարդարար, քեմալիզմն այլեւս աշխարհին հետաքրքիր չէ. հինցած, խպառ banale դարձած թեմայ է թիւրքի ջարդարարութիւնը:

Ներոն բնաւ հետաքրքիր չէր, երբ խողխողում էր իր մայրը, իր կինը եւ հրդեհում Հռոմը. բայց նա եղեռնօրէն հետաքրքիր երգիծաբանական ֆիդուրայ է, քնարը ձեռքին նուագելիս բոցավառուող քաղաքի լոյսերի մէջ:

Մարդկային հոգին յստակութեան եւ գրծերի ներդաշնակութեան սիրահար՝ ճգնում է միշտ ձեւերի պարզութեան. եւ երբ եղեռն ու զաւեշտը խառնուում են իրար, նա սարսռում է, լացի ու խնդութեան մէջ կարկամում. ահա այս եղերածին զաւեշտն է խաղում այսօր Թիւրքիայում քեմալիզմը:

Եւ մարդու հոգին է տառապում այդ տեսարանից. բայց եւ շատերի մտքերի մէջ քեմալիզմը ահագին չափոթ է ստեղծել: Արդարեւ Միացեալ Նահանգներից դուրս, ուր տակաւին Վաշինկթընի, Լինկըլնի եւ Վիլսոնի պատգամները իշխում են եւ ուր թիւրք ու թրքութիւն բնազդական հակակրանք են յարուցանում, մնացեալ քաղաքակիրթ երկրներում հետզհետէ մեծանում է քեմալիզմի յարուցած խռովքը: Դանդաղօրէն, բայց անընդհատ բազմանում է այն մարդկանց թիւը, որոնք ոգի ի բռին ջանադիր են, եթէ ոչ համակրանքի, զէթ ներողամտութեան ու մանաւանդ՝ մոռացումի մի մթնոլորտ ստեղծել արտասահմանում այսպէս կոչուած «Նոր Թիւրքիայի» շուրջը, այսինքն՝ քեմալիզմի:

Ես չեմ խօսում դիւանագէտների մասին, որոնց համակրանքն ու հակակրանքը բարոյական գնահատումից վրիպում է եւ հետեւապէս զուրկ է որեւէ արժէքից:

Չեմ խօսում եւ այն թրքասէրների մասին — ժուրնալիստ, թէ քաղաքական գործիչ — որոնք կան բոլոր քաղաքակիրթ երկիրներում եւ որոնց անունն է խղճմտանքի փերեզակներ: Դրանց մի նմուշը գիտեմ մի մեծ երկրում, մի տիկին, հին հայասէրի այրի, որ վերջին տարիները դարձած է քեմալիզմի ջերմ ջատագով ու եռանդուն պրոպագանդիստ թրքութեան: Օտար բարեկամներ միայն վերջերս բացատրեցին ինձ այս ամօթալի մետամորֆոզը. պարզւում է, որ այս տիկինը այժմ խոշոր նիւթական շահերով մասնակից է Զմիւռնիոյ